

**ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԺՈՂՈՎ
ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՄԵՋ**

Շաբաթ, Յունիս 26ին Առաջնորդ Սրբազան Հօր Նախագահութեամբ եւ Ատենապետութեամբ Տէպի Տէրտէրեանի, Քրիստոնէական Դաստիարակութեան Խորհուրդի հերթական ժողովը գումարուեցաւ Առաջնորդարանի մէջ:

Ժողովը սկսաւ Պըրպէնքի Հայց. Եկեղեցւոյ՝ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Խաժակ Քինյ. Շահպազեան աղօթքով: Սրբազան Հայրը Խորհուրդի անդամներուն ուշադրութեան յանձնեց Թեմէն ներս առկայ Քրիստոնէական կրթութեան վերաբերող խնդիրները: Ատենապետուհին ներկայացուց Խորհուրդի կազմին միացած նոր անդամներ Ստեփան Առաքելեանը՝ Վենթուրա Գաւառէն եւ Սուզի Գրիգորեանցը՝ Արիզոնայի Սուրբ Աբգար Հայց. Եկեղեցիէն:

Խորհուրդը վերաքննեց տարուան վերջին երամսեայի գործունէութեան արդիւնքները: Ժողովի ընթացքին հաստատուեցաւ այս տարուան համագործակցութեան ծրագիրը Առաջնորդարանի տարբեր ենթաբաժիններուն եւ կազմակերպութիւններուն հետ, ինչպէս Տիկնանց Միութեան Կեդրոնական Խորհուրդի, Առաջնորդարանի Ամառնային ճամբարի Խորհուրդի եւ այլ ենթայանձնախումբերու հետ: Ժողովը անդրադարձաւ նաեւ Թեմի Կիրակնօրեայ Դպրոցներուն մէջ գործածուող ուսումնական ծրագրին, որուն մէջ կատարուեցան որոշ փոփոխութիւններ յառաջիկայ աշնան պատրաստ ըլլալու համար:

Առ ի գիտութիւնը, Քրիստոնէական Դաստիարակութեան Խորհուրդը Առաջնորդ Սրբազան Հօր կողմէ կազմուած մարմին մըն է, որ պիտի զարգացնէ, գործածէ եւ վերատեսէ Արեւմտեան Թեմի քրիստոնէական կրթական ծրագիրները, որոնց միջոցով կ'ամրանայ հայ մանուկներու եւ պատանիներու քրիստոնէական հաւատքի հիմերը: